

1831



ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ Ա Լ Է Պ Ի

ՀԱՅ ԱԶԳ. ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ



Հ Ա Ս Տ Ա Տ Ե Ա Լ

1925



Յալարան «ԱՐՈՐԱ» Հովեպ

614.8

2-24

614 8
2-24

ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հ Ա . Լ . Է Պ Ի

ՀԱՅ ԱԶԳ. ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ



12002

2010

ԾՐԱԳԻՐ—ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՆՔՊԻ ՀԱՅ ԱԶԳ. ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ



Հալեպի երեք Հայ հոգեւոր պետքու եւ կարգ մը ազգայիններու նախաձեռնութեամբ, կազմուած է բոլորովին չէզոք հողի վրայ Հալեպի ՀԱՅ ԱԶԳ. ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ: Անիկա իրերու բնական բերումով, մաս կը կազմէ օրինաւորապէս կազմուած, Հայաստանի եւ ուրիշ պետութեանց կողմէ պատճօնապէս նանչցուած Կարմիր Սաչերու. ի հարկին անոնցմէ կ'ըստանայ տեղեկագիրներ եւ կ'ուղարկէ իր տեղեկագիրները. կ'օգնէ անոնց եւ օգնութիւն կ'ստանայ անոնցմէ:



38532-67

52453-4 h.

52453-4 h.

ՆՊԱՏԱԿ

1.— Հ. Ա. Կ. Խաչի նպատակներն են. աղքատ հիւանդները դարմանել, եւ եթէ կարելի է անոնց սնունդ տալ, անակընկալ դէպքերու ատեն հայ ժողովուրդի օգնութեան հասնել եւ տարափոխիկ հիւանդութիւններու ատեն նախազգուշական միջոցներ առնելով, հիւանդները դարմանել, հիւժախտաւորներու կայաններ, անգործներու զործ հայթայթելու համար՝ աշխատանքի զբաւենեակ մը հաստատել:

Այս նպատակներուն հասնելու համար հետեւեալ միջոցներու կը դիմէ.

Ա.— Աղքատ հիւանդները դարմանելու եւ դեղ մատակարարելու համար դարմանատուն մը կը բանայ:

Բ.— Տեղաւորման զբաւենեակ մը կը հաստատէ անգործներու աշխատանք հայթայթելու համար, եթէ իր նիւթական միջոցները ներէ:

Գ.— կը հաստատէ հիւանդանոց մը, մայրատուն մը, մանկանոց մը եւ հիւժախտաւորներու ու սարափոխիկ հիւանդութիւններու կայաններ:

Դ.— Կը հաստատէ առողջապահական դասընթացքներ, սոյն գիտութիւնը տարածելու համար:

Ե.— Կը մատակարարէ չքաւոր այրիներու եւ փոքրիկներու սնունդ եւ հագուստ:

ԱՆԴԱՍԱԿՑՈՒԹԻՒՆ

2.— Առանց սեռի եւ դաւանանքի խտրութեան, 18 տարեկանը լրացուցած ամէն անհատ կրնայ անդամակցել Հ. Ա. Կ. Խաչի եւ մասնակցիլ բուէարկութեան:

3.— Իւրաքանչիւր անդամ պարտի կանոնաւորարար վճարելու ամսական առնուագին մէկ քառորդ մէծիտ եւ կամաւոր մուտքի տուրք մը:

4.— Օժանդակ անդամ կը նկատուին այն անդամները որոնք թէեւ կանոնաւորարար կը վճարեն իրենց ամսավճարները, բայց 18 տարեկանը լրացուցած չեն. ասոնք իրաւունք չունին բուէարկութեանց մասնակցիլ:

5.— Բարերար անդամ կը նկատուին անոնք որ մէկ անգամէ 25 ոսկիի նուիրատուութիւն մը կընեն կամ բացառիկ ծառայութիւն մը կը մատուցանեն Հ. Ա. Կ. Խաչի:

6.— Պատուոյ անդամ են անոնք որ մէկ անգամէ տասն ոսկիի նուիրատուութիւն մը կընեն:

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

7.— Հ. Ա. Կ. Խաչը կ'ունենայ Մայր դիւան մը եւ Վարչութիւն մը:

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

8.— Մայր դիւանը կը բաղկանայ. Ատենապետէ եւ փոխ Ատենապետէ մը, Ատենադպիրէ եւ փոխ ատենադպիրէ մը, որոնք բուէներու մեծամասնութեամբ կ'ընտրուին ընդհ. ժողովոյ կողմէ:

9.— Ատենապետի եւ ասոր բացակայութեան՝ փոխ Ատենապետի պարտականութիւնն է հրաւիրել Ընդհանուր ժողովները եւ վարել զանոնք. իսկ Ատենադպիրի կամ փոխ ատենադպիրի պաշտօնն է խորհրդակցութիւնները արծա-

նագրել եւ թղթակցութիւնները կատարել:

10. — Մայր դիւանի շրջանը մէկ տարի է եւ կրնայ վեր-
ընտրուիլ:

11. — Մայր դիւանը, հարկ եղած ատեն վարչութեան ուղ-
եալ զեկոյցով մը, բացառիկ Ընդհանուր ժողով գումարնե-
լու իրաւասութիւնը ունի:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

12. — Վարչութիւնը կը բաղկանայ եօթն անդամներէ, որք
են. Ատենապետ, Ատենադպիր, Հաշուակալ, Գանձապահ
եւ երեք Խորհրդականներ:

13. — Ատենապետ եւ Ատենադպիր կը կազմեն վարչու-
թեան Դիւանը:

14. — Ատենապետի պաշտօնն է վարչութեան նիստերու
նախագահել, վարել եւ գրութիւնները ստորագրել: Ա-
տենադպիրը՝ ժողովներու արձանագրութիւնները եւ թըղ-
թակցութիւնները կը կատարէ ու կ'ստորագրէ:

15. — Հաշուակալին պաշտօնն է. ելքի եւ մուտքի հաշիւ-
ները բռնել, անոնց վրայ հսկել եւ զանձուած գումարնե-
րը յանձնել գանձապահի:

16. — Գանձապահի պաշտօնն է. իրեն յանձնուած գումար-
ները պահպանել եւ փոխան ստացագրի՝ հարկ եղած վը-
ճարումները ընել. այս վերջին պարագային, դիւանի գրա-
ւոր հաւանութիւնը անհրաժեշտ է:

17. — Գանձապահի քով քսան ոսկիէ աւելի պէտք չէ գրտ-
նուիլ. աւելին՝ դիւանի եւ գանձապահի անունով ապահով

դրամատուն մը աւանդ կը ձգուի Առաջնորդարաններու
վերին հսկողութեան տակ: (Սյս հսկողութիւնը կը կայա-
նայ ամէն տարի Դիւանի եւ Գանձապահի փոփոխումը զե-
կուցանել դրամատան:)

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿԸ

18. — Վարչութեան եօթն անդամները կ'ընտրուին հետեւ-
եալ եղանակով. երեք անդամներ կ'ընտրուին եւ կը ներ-
կայացուին երեք Հայ յարանուանութիւններուկողմէ. իսկ
չորս անդամները՝ կ'ընտրուին ընդհանուր ժողովոյ մէջ
գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու մեծամասնու-
թեամբ:

19. — Չորս անդամներու ընտրութեան ատեն կուսակցու-
թիւն մը կամ կուսակցականներ երեքէ աւելի չեն կրնար
անդամ տալ, այսինքն կուսակցութիւն մը առանձինն երկու-
քէ աւելի եւ կուսակցութիւններ հաւաքաբար երեքէ ա-
ւելի չպիտի կրնան անդամ ունենալ վարչութեան մէջ: Հա-
կառակ պարագային, ընտրութեան ատեն նուազ քուէ ստա-
ցող կուսակցական անդամի մը ընտրութիւնը չեղեալ նկա-
տուելով, ի նորոյ ընտրութիւն կը կատարուի: Եթէ կա-
տարուած երկու յաջորդական ընտրութիւնները միեւնոյն
արդիւնքը տան, Մայր դիւանը իրաւասու է նշանակովի
չէզոք անձ մը պաշտօնի կանչել:

20. — Վարչութեան ընտրելիները պէտք է օրինաւոր ան-

դամներ եւ առնուազն 25 տարեկան ըլլան:

21.— Եթէ վարչութեան անդամներու միջեւ ո եւ է անհամաձայնութիւն ծագի, նախ Մայր Իլեանի կողմէ ջանքեր կըլլան զայն փարատել: Հակառակ պարագային, ընդհ. ժողովը նիստի կը հրաւիրուի լուծում մը գտնելու համար:

22.— Վարչութեան շրջանը չի լրացած, եթէ իր գործունէութիւններու մէջ թերացումներ նշմարուին, ընդհ. ժողովոյ մեծամասնութեան քուէով կրնայ հրաժարեցուցուիլ եւ նոր վարչութիւն մը ընտրուիլ:

23.— Վարչութիւնը՝ ընդհ. ժողովոյ գործադիր մարմինն է եւ հսկողը՝ Հայ Ազգ. Կ. Խաչի բոլոր գործառնութեանց. ան իրաւասութիւն ունի պաշտօնեաները կարգել եւ հրաժարեցնել, սահմանել անոնց թոշակները եւ կատարել բոլոր գնումները եւ ծախքերը, եւայլն:

24.— Վարչութիւնը պէտք տեսնուած պարագային, Մայր դիւանի միջոցաւ կրնայ բացառիկ ընդհ. ժողով գումարել:

25.— Իւրաքանչիւր վեց ամիսը անգամ մը, Ընդհ. ժողովոյ նիստէ առաջ վարչութիւնը պարտաւոր է իր նիւթական եւ բարոյական գործառնութիւններու տեղեկագիրը յանձնել Մայր դիւանի, ընդհ. ժողովոյ ներկայացուելու համար:

26.— Վարչութեան անդամներէ հրաժարող կամ մեկնողներու տեղ կ'ընտրուին յաջորդաբար առաւելագոյն քուէ ստացողները: Եթէ ընտրուելիք անդամը, ներկայ անդամներու կէսէն աւելին քուէն ստացած չ'ըլլայ Մայր դի-

ւանը իրաւասու է առաւելագոյն քուէ անողներէն յարմարագոյնը ընտրել:

27.— Անդամներէ կամ դուրսէ, վարչութեան դէմ ո եւ է բողոք կամ պահանջք պէտք է ուղղել Մայր դիւանի, ր եթէ պէտք տեսնէ կը յղէ վարչութեան կամ Ընդհ. ժողովոյ:

28.— Վարչութեան շրջանը մէկ տարի է եւ կրնայ վերընտրուիլ:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

29.— Ընդհ. ժողովը կը գումարուի տարին անգամ մը ընտրութեան համար, իսկ վեց ամիսը անգամ մը, ընդհ. տեղեկատուութեան եւ անդամներու միջեւ շփում հաստատելու համար. ասկէ զատ բացառիկ պարագաներու մէջ, բացառիկ նիստ կրնայ ունենալ եթէ անդամներու մէկ երրորդը գրաւոր կերպով փափաք յայտնէ:

30.— Ընդհ. ժողովոյ ներկայ կրնան գտնուիլ եւ քուէարկութեանց մասնակցիլ այն ամէն անդամները, որոնք ներկայ կանոնագրի 2—3, 5 եւ 6 յօդուածներու տրամադրութիւնները լրացուցած ըլլան:

31.— Եթէ առաջին հրաւիրով ներկայ անդամներով մեծամասնութիւն չը կազմուի, երկրորդ նիստը մեծամասնութիւն պիտի նկատուի ինչ որ ալ ըլլայ ներկաներու թիւը:



ՀԱՍՈՅԹՆԵՐ

32.— Հ. Ա. Կ. Խաչի հասոյթներն են. մուտք եւ անդամավճարներ, դարմանատան հասոյթներ, կտակներ, նուէրներ, վիճակահանութիւններ, Երեկոյթներու հասոյթներ, նպաստներ եւ այլն:


33.— Հասոյթներու 160ին 10ը անձեռնմխելի պիտի մնայ, Ընդհ. ժողովոյ որոշմամբ, արտակարգ պէտքի մը յատկացուելու համար:



ԾԱԽՔԵՐ

34.— Ծախքերու բաժինը կը կազմէ Կ. Խաչի նպատակներու գործադրման համար եղած ծախքերը. բժիշկի, դեղագործի, հիւանդապահուհիներու, քարտուղարի, դարմանատան եւ զրաւենեակի վարձքերու, պաշտօնեաններու եւ աղքատ հիւանդներու, շինութիւններու, կարօտեալներու տրուելիք սնունդներու, դեղերու եւ այլ խնամքներու եւ այլն:

35.— Մինչեւ հինգ բսկիի ծախքերը, դիւանի եւ գանձապահի զիտութեամբ կը կատարուին, իսկ աւելին՝ վարչութեան որոշումով կը կատարուի:



ՅԱԻԵԼՈՒԱԾ

36.— Հ. Ա. Կ. Խաչի լուծուելու պարագային, բոլոր գոյքերը, պատրաստ դրամը, արձանագրութիւնները, տետր-

րակները, եւ եթէ շէնքեր կան՝ ընդհանուր հաշուեյարդարումէ վերջ, կը յանձնուին Հայ Բարեգ. Ընդհ. Միութեան եւ անձեռնմխելի կը մնան մինչեւ նոր Կարմիր Խաչի մը կազմութիւնը:

37.— Սոյն ծրագիր—կանոնագիրը կրնայ բարեփոխուիլ Ընդհ. ժողովի 2/3 ի մեծամասնութեան քուէով, ի բաց առեալ, կանոնագիրի առաջին հատուածէ եւ վարչութեան ընտրութեան վերաբերեալ թիւ 18 եւ 19 յօդուածներէ:



Բացառաբար ներկայ շրջանի վարչութիւնը ինն անդամներէ բաղկացած է.

ԱՆԴԱՄՔ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Հաշուակալ-Գանձապահ Ասենապպի		Ասենապիս
Մ. Մըսրըլեան	Տֆր. Հրեցակեան (Վ.Եր.)	Ա.Շիրահեան
	ԽՈՐՀՐԿԱԿԱՆՔ	
Տֆր. Պօղոսեան	Ս. Ահարոնեան	Ս. Խըրլաբեան
Տֆր. Ֆ. Յովնանեան	Տֆր. Քաչբերունի	Տֆ. Պասմանեան

1831

Faint, illegible text visible through the paper from the reverse side.



2013



217